




Հանրահաշվի ընդունելության քննություն
10-րդ դասարան ընդունվողների համար, 2017-2018 ուստարի


Գտնել $y = \frac{1}{4-|x|} + \frac{15}{\sqrt{2x-11}} + \sqrt{x+6}$ ֆունկցիայի որոշման տիրույթը: /1/

1. Տրված է $y = ax^2 + bx + c$ ֆունկցիայի գրաֆիկը: Գտնել a, b, c թվերը: /1/




2. Գտնել $y = |x^2 - 2|x||$ ֆունկցիայի աճման և նվազման միջակայքը: /2/

3. Գրել հետևյալ $A(-3; 2)$ կետով անցնող և տրված ուղղին զուգահեռ ուղղի հավասարումը: /1/



4. Լուծել $f(x) \leq 0$ անհավասարումը: /1/



5. Գտնուցե՛լ $y = \sqrt{16 - x^2}$ ֆունկցիայի գրաֆիկը: /1/

6. Գտնե՛լ $P(x) = x^4 - 2x^3 + 3x^2 + 4x - 1$ բազմանդամը $x^2 - 4$ երկանդամի բաժանելուց ստացված քանորդն ու մնացորդը: /1/

7. Լուծե՛լ համակարգը: /2/

$$\begin{cases} \frac{|x| - 1}{|x| + 15} > 0 \\ \frac{|x| - 3}{|x| + 5} < 0 \end{cases}$$

8. Լուծե՛լ համակարգը: /1/

$$\begin{cases} x + xy + y = 11 \\ x - xy + y = 1 \end{cases}$$

9. Թվային ուղղի 7 և 35 թվերի միջև գտեք վեց կետ, որոնց կոորդինատներն այդ թվերի հետ միասին կազմում են թվաբանական պրոգրեսիա: /2/

10. Թվաբանական պրոգրեսիա կազմող 3 թվերի գումարը 18 է: Եթե այդ թվերին ավելացնենք համապատասխանաբար 1, 3 և 17, ապա այդ թվերը կկազմեն աճող երկրաչափական պրոգրեսիա: Գտնե՛լ թվաբանական պրոգրեսիայի 3-րդ անդամը: /2/

11. Հնձվորները պետք է 2 արտ հնձեն: Առավոտվանից սկսեցին հնձել մեծ արտը, իսկ կեսօրից հետո բաժանվեցին. մի կեսը մնաց առաջին արտում և երեկոյան արդեն հնձեց, վերջացրեց այդ արտը, իսկ երկրորդն անցավ մյուս արտը հնձելուն, որի մակերեսը առաջինի մակերեսից 2 անգամ փոքր էր: Քանի՞ հնձվոր է եղել, եթե հայտնի է, որ հաջորդ օրվա ընթացքում մնացած աշխատանքն ավարտել է ընդամենը մեկ հնձվոր: /3/

12. Դասարանում կա 6 տղա և 4 աղջիկ: Նրանցից պետք է ընտրել 2 հերթապահ: Գտնե՛լ հավանականությունը այն բանի, որ ընտրված հերթապահները տղաներ են: /2/